ՄԱՅՐ ԱԹՈՌ

Տարեւոյս ապրիլ 20-ին Մոսկուայի Կայսերական Համալսարանում, իրաւաբանական ճիւղի պետական քննութիւններ տալով Մ. Աթոռի միաբան Տ. Յուսիկ վարդապետ Զոհրաբեան, որ այժմ գտնւում է Մոսկուայում, իբրև ուսուցիչ Լազարեան ճեմարանի, ստացաւ առաջին կարգի աւարտման մրցանակագիր։

* * *

Բարձրագոյն հաճութեամբ անցեալ ապրիլի 30-ին Ն. Կ. Մեծութեան հրամանով.

ա) Հաստատւում է Մ. Աթոռի միաբան Տ. Բագրատ Եպիսկոպոսը թեմական առաջնորդ Շամախու թեմի.

բ) Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետը արձակւում է իւր պաշտօնից և նորա տեղ նշանակւում է Տաթեւի փոխանորդ Տ. Վահան վարդապետ Տ. Գրիգորեան, իբրև ժամանակաւոր կառավարիչ։

գ) Մայր Աթոռի միաբան Տ. Տիրայր ծ. վարդապետ և Ն. Նախիջևանի փոխանորդ Տ. Գէորգ վարդապետ հաստատւում են Ս. Էջմիածնի Սինօդի անդամ։

Այդ հաստատութիւնները տեղի են ունեցած Վեհափառ Հայրապետի անցեալ տ. նոյեմբեր 30 և տար. յունուար 8-ի №№ 2148, 35 և 36 դիմումների հիման վերայ։

* * *

Մայիսի 7-ին Էջմիածին ժամանեցին Լոնդոնի քաղաքագլխի Կովկասեան առաքելութեան անդամներից պ. պ. Հիչքինս և Բակնաուզ, որոնք և առանձին ունկնդրութեան արժանացան Ն. Վեհափառութեան կողմից, պարզելով իրենց առաքելութեան նպատակը։

Պ. Պ. Հիչքինս և Բակհաուէ դիտեցին Մ. Տաճարը, որոնց վերայ շատ գեղեցիկ տպաւորութիւն թողեց իւր մանրանկարների Ճեացորդները՝ երկար ուշադրութիւն նուիրեցին Մատենադարանում գտնուած ձեռագիրների Ճեացորդների գրչութեան, արուեստի և մանրանկարչութեան նմուշներով։ Այցելեցին Որբանոցը, ուր մի քանի խմբանկար առին, երկար դիտեցին Նոր-Վեհարանի Հիւանդանոցն իւր բոլոր մասերով և գոհ Ճեացին հիւանդների, որբերի և գաղթականների վիճակից։ Բացատրութիւններ և կարևոր ծանօթութիւններ տալիս էր Ն. Սրբութեան Դիւանապետը։

Նոյն երեկոյեան, Վանական հիւրընկալութիւնը վայելելուց յետոյ, մեկնեցին Երևան, այնտեղից Պարսկաստան և Վան անցնելու մտադրութեամբ, ուր կմիանան Հ. Բակատօնին։

* *
*

Ն. Վեհափառութիւնն իբրև արտայայտութիւն այն շնորհակալական զգացման, որ Հայութիւնն ունի դէպի Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահ Վիդրո Վիլսըն և Անգղիական աւագների խորհրդի անդամ Լորդ Ջէյմս Բրայս, որոնք իրենց դիրքով, ազդեցութեամբ և կենդանի խօսքով Հայութեան լաւագոյն բարեկամներ լինելով, աշխատել են նորա գլխին եկած տանջանքները թեթևացնել ըստ ամենայնի, Իւր Հայրապետական Կոնդակով շնորհակալութիւն յայտնեց՝ առանձին-առանձին կոնդակներով։

Կոնդակները պատրաստուած յատուկ պատուէրով Հայկական մանրանկարչութեան գեղեցիկ զարդերով, արուեստաւոր խորանազարդով, ճաշակաւոր լուսանցազարդերով, իսկ ամբողջը դրուած է միջին Մեսրոպեան երկաթագրով։

Նախագահ Վիլսընի կոնդակն ուղարկուեցաւ Ամերիկայի Առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետին պատգամաւորութեամբ ներկայացնելու պ. Նախագահին, իսկ Լորդ Ջ. Բրայսի կոնդակն ուղարկուեցաւ Եւրոպայի առաջնորդ

Գեր. Տ. Գէորգ արքեպիսկոպոս Իւթիւճեանին պատշաճ եղանակով յանձնելու Լորդ Բրայսին։

* * *

Մայիսի 6-ին Ն. Կ. Մեծութիւն Օգոստափառ Կայսեր ծննդեան տարեդարձի առթիւ Մ. Տաճարում գոհաբանական մաղթանք կատարուեցաւ միաբանական ամբողջ ուխտի ներկայութեամբ և Նորին Սրբութեան հանդիսադրութեամբ։

Պատարագիչն էր Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոս։

* * *

Մայիսի 9-ին Մուշ գնացող արշաւախմբի կողմից, Իսահակ սարկաւագի ստորագրութեամբ ստացած հեռագրից, տեղեկութիւն ստացուեցաւ, որ Մշոյ ս. Կարապետ վանքի գմբէթները Տաճիկ զօրքի կողմից ուժանակով պայթեցրած է, թագստոցներն աւերած և յափշտակած, վանքն աւերած, Առաքելոց վանքը անշէն և աւեր դարձրած, թարգմանիչների գերեզմանները խախտած և նոցա նշխարներն անհանգստացրած։

* * *

Մայիսի 14-ին Ն. Կ. Մեծութեանց Օգոստափառ Կայսեր և Կայսրուհու թագադրութեան տարեդարձի օրը Մ. Տաճարում ս. Պատարագիչ յետոյ հանդիսաւոր մաղթանք կատարուեցաւ, ամբողջ միաբանական ուխտի մասնակցութեամբ։

Ն. Վեհափառութիւնը բարեհաճել էր Տաճար իջնել և ներկայ լինել Ս. Պատարագին և մաղթանքին։

Պատարագիչ և հանդիսադիր էր Գեր. Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս։

* * *

Մայիսի 15-ին Տփխիսից վերադարձան Ն. Վեհափառութեան կողմից, իբրև Հայ հոգևորականութեան ներկայացուցիչ ուղարկուած, Կովկասում տեղական ինքնավարութիւն (զեմստվո) մտցնելու խորհրդակցութիւններին մասնակցելու նպատակով, - Տ. Բաղրատ եպիսկոպոս և Տ. Գարեգին ծ. վարդապետ, որոնք իրենց վերայ դրուած առաքելութեան հետևանքի մասին ընդարձակ զեկուցագիր մատուցին Ն. Ս. Օծութեան։

* * *

Մայիսի 16-ին Երևանից Մ. Աթոռ ժամանեց Երևանի նահանգապետ Ա. Ե. Սարէ՛բիցկիյ, որին Ն. Սրբութիւնը բարեհաճեց մօտ մի ժամ ունկնդրութիւն շնորհել։

* * *

Վանի շրջանի վանքերից, եկեղեցիներից և այլ տեղերից ընդհանուր խուճապի ժամանակ անհարազատ ձեռքերով վտանգուած նախնեաց յիշատակ Ձեռագիրներից բաւական թուով ժողոված և ուղարկած էր Տ. Յովհաննէս վարդապետ Հիւսեան, իբրև ներկայացուցիչ հոգևոր իշխանութեան։ Այդ Ձեռագիրները հասնելով մինչև Ջուլֆա, տեղական մաքսատան վարչութիւնը դժուարացել էր թոյլ տալ առանց մաքսի անցնելու Ձեռագիրները և Մ. Աթոռ բերելու։

Այդ նպատակով Ն. Վեհափառութեան կողմից գրուեց Կովկասի Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական իշխան Վ. Ն. Օրլովին, խնդրելով նորա կարգադրութիւնը՝ Ձեռագիրներն անմաքս սահմանն անցնելու և Մ. Աթոռ հասցնելու համար։ Իշխան Օրլովի սիրալիր աջակցութեամբ Ձեռագիրներն անմաքս և անվնաս հասցնելու կարգադրութիւն եղաւ։

* * *

Մայիսի 18-ին Վանի երկրապահ գնդի (միլիցիայի) պետ Արմենակ Եկարեան Մ. Աթոռ ժամանելով արժանացաւ Ն. Վեհափառութեան առանձին ունկնդրութեան, մանրամասն զեկուցանելով Վանի և շրջակայքի հայ ժողովրդի ներկայիս դրութեան մասին և շատ շահեկան տեղեկութիւններ հաղորդելով այնտեղ տիրող տնտեսական վիճակի, վանքերի և եկեղեցիների, ժողովրդի հետագայում Հայրենիք վերադարձելու տենչի, մեր օժանդակող կազմակերպութիւնների խնամքի և հոգածութեան մասին։

Ի նկատի ունենալով ներկայիս պահանջը Ն. Սրբութիւնն ի նկատի ունի ուղարկել մի կարող անձն, իբրև ներկայացուցիչ հոգևոր իշխանութեան, որ կարող լինի պիտանի լինել ժողովրդի կարիքներին և յարաբերութիւն ստեղծել տեղական ռուս վարչական իշխանութեան հետ։

* * *

Մայիսի 20-ին Ն. Վեհափառութիւնն ստանալով Կովկասեան Օգոստափառ Փոխարքայի գրութիւնը, որով տեղեկութիւն էր տրուում Ն. Սրբութեան Սինոդի նորահաստատ անդամների, Շամախու թեմի առաջնորդի հաստատութեան և Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարչի նշանակուելու մասին, — Ն. Վեհափառութիւնը կարևոր կարգադրութիւններ անելու հաճութիւնն ունեցաւ, որպէսզի իւրաքանչիւրն օր առաջ իւր պաշտօնի գլուխն անցնէ։

* * *

Մայիս 22-ին Լոնդոնի Լօրդ-Մէրի Հայ փախստականներին օգնող ընկերութեան պատուաւոր քարտուղար վերապատուելի Հարոլդ Բաքստոն (Rev. Harold Buxton, Horleg, Oxford) ժամանեց Երևանից, գերապատ. Տ. Խորէն եպիսկոպոսի հետ։ Վերջինս նախօրօք հեռագրական հաղորդագրութեամբ իմաց էր տուած այդ մասին։

Վերապատուելի Հ. Բաքստոնը արժանացաւ Ն. Ս. Օծութեան առանձին ունկնդրութեան, որի ժամանակ

թարգմանի դեր էր կատարում նորա պատուակալ քարտուղար պ. Արշ. Սաֆրաստեան։

Ունկնդրութիւնը տեւեց մօտաւորապէս մէկ կէս ժամ, որի ժամանակ Վեր. Բաքսոն մանրամասն դեկոյց այն հայանպաստ շարժման մասին, որ կայ և գոյութիւն կունենայ Լոնդոնում և Անգղիայում ընդհանրապէս։ Այդ շարժման գլուխ կանգնած են այնպիսի հասարակական դիրքի տէր անձինք, ինչպէս Լոնդոնի Լօրդ-Մէրը (Քաղաքագլուխը), որ միևնոյն ժամանակ և նախագահն է Հայ փախստականների օգտին ժողովող նպաստների։

Իբրև փոխ-նախագահ, գործի մէջ են ա) Քէնթերբերիի արքեպիսկոպոսը և բ) Եօրքի արքեպիսկոպոսը (Անգլիական եկեղեցու պետ), գ) Կարդինալ Բօրն (Անգղիական Կաթոլիկ եկեղեցի), դ) Լոնդոնի Ռուսական դեսպանը, ե) Լորդ Ջէյմս Բրայս, (անդամ աւագների խորհրդարանի), զ) Լօրդ Կրօմըր (նախկին փոխարքայ Հնդկաստանի), է) Սըր Կոմբթրն Ռիկէտ և ուրիշ շատերը։

Յանձնաժողովի Առաջնորդն է Սըր Անիւրին Ուիլեամս (Պարլամենտի անդամ, և պատուակալ-քարտուղար Վեր. Հարօլդ Բաքսոն։

Յանձնաժողովն այնքան մեծ հեղինակութիւն ունի բովանդակ Անգղիայում և այնպիսի լայն ժողովրդականութիւն է վայելում, Հայ ազգի աննկարագրելի տառապանքները մասամբ գոնէ թեթևացնելու խնամարկութեան հոգն այնպէս է մօտ ամեն մի անգղիացու սրտին, որ Յանձնաժողովը մինչև այժմ դեռ ևս կարիք չէ զգացել արտակարգ միջոցների, կոչումների և լրագրական հնչուն յայտարարութիւնների դիմելու, որպէս զի իւր գուտ մարդասիրական գործն առաջ տանէ։ Յանձնաժողովի դրամագլխի մեծագոյն մասն ստացուած է, համարեա, տարբեր դասի և ժողովրդական խաւերի անհատներից. Ուէլսի, Շոտլանդիայի, Ֆոնվալսի, Եօրքի են են. ամէն կարգի ազգասիրութեան մանր լումաներն են, որ կազմել են մինչև այժմ ժողոված մեծ գումարը, որից շուրջ 38,239 անգղիական ոսկի արդէն փոխադրուած է Կովկաս և այլուր Հայ տա-

ռապեալներին բաշխելու։

Այդ գումարից փոխադրուած է ա) Տփխիսի Կենդրոնական Յանձնաժողովին 16,500, բ) Տփխիսի Բաղաքագլխին 8,000, գ) Վեհ. Հայրապետին 5,000, դ) դոք. Մրկ-Ալլոմին (Ամերիկայի Ներկայաց.), 5,000, ե) Անգղիական Թաւրիզի հիւպատոսին, 3,550, զ) Անգղիական Պորտ-Սայիդի հիւպատոսին 189։—

Լորդ-Մէրի Յանձնախմբի էական նպատակը լինելով, ամէն հնարաւոր միջոցներով, օգնութեան հասնել տառապող Հայաստանին և թեթևացնել նորա ապաբաղդ զաւակների ծանր վիճակը, ուղարկել է իւր անդամներից մի քանիսին ի մօտոյ ծանօթանալու Օգնութեան խնդրի զանազան կողմերին և բաշխման եղանակին, որպէսզի ըստ ամենայնի լաւատեղեակ լինի իրերի դրութեան, կարիքի մեծութեան, նպատակների որակի և քանակի պահանջին ըստ երկրամասերի և ըստ պարագմունքների և կարող լինի աւելի գիտակից օգնութեան ձեռնարկել։ Այս ծանր, բայց պատուական, գործը յանձնուած է վերապատուելի Հարոլդ Բաքստոնին, որ յայտնի է ոչ-հեռաւոր անցեալում իւր նոյնանման ճանապարհորդութեամբ գժբաղդ Սերբիայում, իւր եղբայր Մ-ր Նօէլ Բաքստոնի հետ (Խորհրդարանի անդամ) և որ քիչ մնաց եղբօր կեանքի գնով պիտի վերջանար, նոցա դէմ մի տաճիկ սպայի ձեռքով կատարած մահափորձի շնորհիւ։

Վեր. Հար. Բաքստոնին ընկերակցել է իւր ուղևորութեան ժամանակ

ա) Բժ. Գրանտ Ասպլանդ, Անգղիական բանակի հաղարապետ, եղել է պատերազմի շրջանում՝ Ֆրանսիայում և Սերբիայում, անցեալ ձմեռը Աւստրո-գերմանացիների արշաւանքի ժամանակ Սերբիայում գերի ընկաւ և չորս ամսից յետոյ ազատուեցաւ և վերադարձաւ Անգղիա։

բ) Օր. Բէաթրիս Բարը, գթութեան քոյր, Իրլանդուհի, եղել է Սերբիական ճակատում, անցեալ ձմրան մեծ նեղութիւններ է կրել Սերբիական զօրքի ծանր նահանջի

օրերին, ձիւն ու ցեխի մէջ ոտքով Սերբիայից, Ալբանիայի լեռներով, ապաստանի վայրը հասնելով։

գ) Օր. Մարգրիտա Բարբրը, գթութ. քոյր. նոյնպէս եղել է Սերբիայում, գերի է ընկած Աւստրիացիների ձեռքը, մի քանի ամիս Վիէննա մնալով, ազատ է արձակուած։

դ) Տիկ. Արմատրոնկ, Անգլուհի, երկար ժամանակ ծառայել է Անգլիական զինուորական հիւանդանոցներում.

ե) Պ. Ալֆրէդ Բակհաուզ, նպաստի գործերով, եղել է Բելգիական և Ֆրանսիական զօրամասերում.

զ) Պ. Ջորջ Հաջքին, գործարանատէր և սեղանաւոր, որ եկել է միայն դէպի գործն ունեցած սիրուց,

և է) Պ. Արշակ Սաֆրասեան, անգլիական լրագիրների թղթակից, ընկերակցում է, իբրև պատ. բարեուղար Վեր. Բաքստոնին։

Ջնայելով ակնյայտնի վտանգներին Հ. Բաքստոնն ու իւր ընկերները սիրով յանձն են առնում այդ երկար ճանապարհորդութիւնը և Շուէդ-Նորվեգիայի-Ֆինլանդիայի վրայով հասնում Պետրոգրադ-Մոսկուա-Տփխիս։ Այստեղ բժ. Գ. Ասպլանդն ու գթութեան քոյրերն իսկոյն իրենց բժշկական օգնութեան գործին են կպչում, մի մասը Վան, իսկ միւս մասը Կարին ուղևորուելով։

Վեր. Հ. Բաքստոնը հիացմամբ էր խօսում այն ջերմ ընդունելութեան մասին, որ գտաւ Ռուսական բոլոր շրջաններում։ Օգոստափառ Փոխարքան նորան ամէն դիւրութիւն տալու հաճութիւն ունեցաւ, Կարին կատարած իւր ճանապարհորդութեան ժամանակ տեղական զինուորական և քաղաքացիական մասի վարիչներն ամէն քայլում իրենց պատրաստականութիւնն էին ցոյց տալիս։

Ինկատի ունենալով Կարնում և շրջակայքում հաւաքուած գաղթական որբերի ծանր վիճակը Հ. Բաքստոնը ի հաշիւ «Լոնդոնի Լորդ-Մէրի դրամագլխի» մի Որբանոց է բաց անում, որի հովանաւորութիւնն ամենայն ուրախութեամբ յանձն է առնում գեներալ Կալիտին։ Որբանոցի համար, իբրև խնամարկող և կառավարիչ հրաւիրուած է Ռ. Զօրեան։

Վերապ. Հ. Բաքստոնը մտադիր է Էջմիածնից Երևանի վրայով անցնել Վան և տեղն ու տեղն ուսումնասիրել փախստականների, հայրենիք վերադարձող գաղթականութեան բոլոր կարիքներն ու պահանջները։

Վեր. Հ. Բաքստոնը դիտեց Մ. Աթոռի բոլոր հաստատութիւնները, Որբանոցները, Հիւանդանոցը և շատ գոհ մնաց իւր դիտողութիւններով, մանաւանդ որբերի և հիւանդանոցի վիճակը նորան մեծ հաճոյք պատճառեցին։ Հ. Բաքստոնը զարմացաւ, որ նոր-Վեհարանի պէս մի փառահեղ շինութիւն դրուած է գաղթականների տրամադրութեան տակ։

Հ. Բաքստոնը վայելելով Մ. Աթոռի հիւրասէր ասպընջականութիւնը իւր կատարեալ գոհունակութիւնը յայտնեց ճաշի ժամանակ, որ շատ աւելի խնամոտ հոգածութիւն է տեսնում ամէն տեղ, քան կարելի էր ենթադրել և որ Անդրիան իւր սկսած մարդասիրական գործը կիսատ չի թողնիլ։ Ճաշի ժամանակ շնորհակալութեան խօսք ուղղեցին Հ. Բաքստոնին, Տ. Գարեգին ծ. վարդապետը, և Անգրիական ժողովրդին Տ. Տիրայր ծ. վարդապետը։

* *
*

Սինոդի նոր նշանակուած անդամ Տ. Գէորգ վարդապետը դիմելով Ն. Ս. Օծութեան՝ Նորա հաճութիւնն էր խնդրում առ ժամանակ ուշանալ տեղական մի քանի կարևոր գործեր կարգի բերելու համար։

Ն. Սրբութիւնը բարեհաճեց արտօնել նորան մնալ մինչև յուլիս 1-ը։

* *
*

Մուշ գնացող արշաւախմբի անդամները մայիս 29-ի երեկոյեան վերադարձան ողջամբ իրենց առաքելութիւնից։

Հետևեալ օրը խմբի ղեկավարները, շնորհ. Իսահակ սարկաւագ Տէր Ղազարեան, պ. պ. Բահաթուր Բահաթրեան

և Աւետիք Տէր Պօղոսեան, ինչպէս խմբի բժիշկ Խոսրով Փանոսեան ներկայանալու պատիւ ունեցան Ն. Սրբութեան և երկար զեկուցին իրենց առաքելութեան մասին։

Մուշ և շրջակայքը բոլորովին աւերած են, հայ ազգաբնակութեան մնացորդներ շատ քիչ են մնացած, շրջակայքից և Սասնոյ լեռներից ժողովուած են մօտ 6000 հոգի և խնամւում են Կենդրոնականի և Քաղաքների Միութեան խնամքով, Եղբ. Օգն. կողմից թողնուած է առ այժմ տրամադրելի 2000 ր., բացի այն օգնութիւնը, որ խումբը ցոյց է տուել ընակչութեանը տեղն ու տեղը։

Վանքերն ու եկեղեցիներն աւերուած են խորտակ. Ս. Կարապետի վիճակը շատ արգահատելի է, շրջակայքի բոլոր վանքերն աւերուած գիտութեամբ և կանխորոշ մտածողութեամբ, մեծ մասով ուժանակի միջոցով։

Արշաւախումբը կարողացել է գտնել միայն մի թաղլատոց, Ս. Կարապետի եկեղեցական զգեստների, սպասների և տակաւաթիւ Ձեռագիրների, որոնք բոլորն ևս խնամքով բերուած են և Մ. Աթոռի պահպանութեան յանձնուած։

Առաւել մանրամասն այս մասին արշաւախմբի անդամները տեղեկութիւն կտան «Արարատ»ի հետեւեալ համարում, հիմնուելով իրենց օրագրական տետրի և տեսածների վերայ։

* *
*

Յունիս 4-ին Ն. Վեհափառութեան հրամանով Տ. Բագրատ եպիսկոպոսը կուսակրօն քահանայ ձեռնադրեց շնորհ. Իսահակ Տէր Ղազարեան և Երնջակի վանքի միաբան Արշակ սարկաւագներին, առաջնին վերակոչելով Տ. Գիւտ և երկրորդին Տ. Ղևոնդ. նոյն օրը, երեկոյեան, տուեց նոցա նաև սրեղայութեան կոչումն։

Ձեռնադրութիւնը կատարուեցաւ Ս. Հռիփսիմէի վանքում։

* *
*

Յունիս 30-ին Տփխիսի Կովկասեան մուզէումի տեսուչ գնդապետ Ա. Ն. Կազնակովը յատուկ առաքելութեամբ ժամանելով Մ. Աթոռ պատիւ ունեցաւ ներկայանալ Ն. Ս. Օծութեան, առանձին ունկնդրութեամբ։

* *
*

Յունիսի 3-ին Տփխիսից Մ. Աթոռ ժամանեց Կովկասեան Հ. Բ. Ընկերութեան նախագահ պ. Սամսոն Յարութիւնեան և արժանացաւ Ն. Ս. Օծութեան առանձին ունկընդրութեան։

* *
*

Յունիսի 3-ին Վանի շրջակայքից հաւաքած, հ. Յովհաննէս վարդապետ Հիւսեանի ձեռքով ուղարկած և Զուլֆայում մաքսատան մէջ պահեստի դրած, ձեռագիրներն անվնաս հասան Մ. Աթոռ և ի պահ տրուեցան Մ. Աթոռի Մատենադարան։

Ձեռագիրները թուով 87 հատ են, որոնցից 67 հայերէն և 20 այլ լեզուով։

Դժբաղդաբար ձեռագիրների մեծ մասը խիստ վնասուած է, սկզբից և վերջից պակասաւոր, կազմերը պոկուած և աւերի ժամանակ օտար ձեռքերից փչացած։

* *
*

Յունիսի 6-ին, ըստ վաղնջենի սովորութեան, կատարուեցաւ Ս. Հռիփսիմէի տարեկան տօնն ու ուխտագնացութիւնը։ Ժողովրդեան մեծ բազմութիւն եկած էր շրջակայքից և Վաղարշապատից։

Նախորդ երեկոյեան նախատօնակին միաբանութիւնը գնաց Ս. Հռիփսիմէի վանքը, ինչպէս և հետևեալ օրը։

Ս. Պատարագի ժամանակ Ն. Վեհափառութիւնը բարեհաճեց լինել վանքում և իջնել ի համբոյր գերեզմանի Ս. Կուսին։

* *
*

Յունիսի 7-ին Ս. Գայիանէի տօնն այս տարի չկատարուեցաւ Ս. Գայիանէի վանքում, որովհետև վանքն իբրև վարակիչ հիւանդութիւնների ապաստանարան-հիւանդանոց, անվտանգ չէր ժողովրդի ուխտագնացութեան համար։

Տօնը կատարուեցաւ Մ. Տաճարում, որի նախատօնակին Ն. Սրբութիւնը բարեհաճեց Տաճար իջնել։

* *
*

Յունիսի 9-ին Շողակաթի վանքի տարեկան տօնն ևս կատարուեցաւ նախաւանդ սովորական կարգով. նախորդ երեկոյեան նախատօնակին և հետևեալ օրը միաբանութիւնը գնացել էր վանքը պաշտման և ուխտի։

* *
*

Յունիսի 12-ին Ս. Էջմիածնի տօնը կատարուեցաւ սովորական շքով և հանդիսաւորութեամբ։

Նախորդ երեկոյեան Վեհ Հայրապետը եկեղեցական մեծաշուք հանդիսով իջաւ Մ. Տաճար։

Վեհարանի առաջ խմբուեց ամբողջ միաբանական ուխտը ըստ աստիճանի եկեղեցական զգեստներով։

Ն. Սրբութիւնը շուրջառ առնելով, մտաւ ամպհովանու տակ և բուրվառակիրների խնկարկութեամբ, քշոցներով «Հրաշափառ»ի երգեցողութեամբ առաջ շարժուեցաւ Թափօրը։ Առաջից կրում էին Հայրապետական քօղը և Հայրապետական խաչ-դաւազանը, որ կրում էին նորընծայ աբեղաները։

Ծանուած խուռն բազմութեան միջով, անդադար խաչակնքելով իւր հօտին առաջ էր անցնում Ս. Հայրապետը։ Ժողովուրդը, մանաւանդ գաղթական ժողովուրդը, մեծ ջերմեռանդութեամբ հետևում էր Թափօրին, որի համար այդպիսի շքեղ կրօնական հանդէսը առաջինն էր, քանի որ անցեալ տարուայ տառապանքների օրերին տօնական հանդէսը չէր կատարուել։

«Ուրախ լեր» շարականից յետոյ երբ Նորին Սրբութիւնը կանգ առաւ Ս. Էջմեան սեղանի առաջ, արտասանեց «Ուրախ եղէ» աղաղոսը և ապա սկսուեցաւ սովորական երեկոյեան ժամերգութիւնը։

Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ յորդ, զովարար անձրև տեղաց, որ ժողովրդեան կողմից մի առանձին բարեբար նշան համարուեց Տիրոջ կողմից դէպի իւրակերտ Մ. Տաճարը և դէպի իւր տառապող ժողովուրդը։

Պատարագից յետոյ կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, ժողովրդեան խուռն բազմութեան ներկայութեամբ։

Օրուայ պատարագիչն էր Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազեան։

* *
*

Ս. Էջմիածնի տօնի օրը Ն. Սրբութիւնը բարեհաճեց վարձատրել Ս. Էջմիածնի միաբան Տ. Թադէոս վարդապետին ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք շնորհելով, իւր հաւատարիմ ծառայութեան համար։

* *
*

Մ. Աթոռի հիւանդանոցներում խնամուող հիւանդների թիւը, շնորհիւ ձեռք առած միջոցների, հետզհետէ պակասում է մինչ այն աստիճան, որ Նոր-Վեհարանի մէջ գոյութիւն ունեցող հիւանդանոցի առաջին յարկի բաժինը բոլորովին վերացած է և մնում է միմիայն երկրորդ յարկաբաժինը, զինուորական հիւանդանոցի վարիչ բժշկպտ. Ս. Ի. Գուրբեկու ղեկավարութեամբ։

Դրսի հիւանդանոցների հիւանդների թիւն ևս զգալի կերպով պակասել է. իսկ Ս. Գայիանէի տարափոխիկ սուր հիւանդների քանակը չնչին չափերի է հասել, իսկ հիւանդութեան ընոյթը սուր վիճակից անցել է շատ թեթև վիճակի։

Հիւանդանոցների թուական վիճակը Մարտ ամսում հետեւեալ պատկերն ունէր.

ա) Պարտաւորիչ մահիճների թիւը . . . 400

բ) Հիւանդներ առ 1-ն ապրիլի 315
գ) Նոր մտած հիւանդներ գիւղից . . . 290
դ) » » » միւս հիւանդանոցներից 2
ե) Հիւանդանոցից ելած առողջներ . . . 394
զ) Փոխադրած միւս հիւանդանոցները . . 1
է) Մահացութեան դէպքեր 13
ը) Մնացել են հիւանդ 199
թ) Հիւանդների ընդունելութիւն . . . 2465

Առ 1 ն Մայիսի.

ա) Պարտաւորիչ մահճակալների թիւը . . 400
բ) Հիւանդներ առ 1-ն մայիսի 199
գ) Նոր մտած հիւանդներ 113
դ) Առողջացածներ և ելած 184
ե) Մահացութեան դէպքեր 10
զ) Մնացել են հիւանդ 118

Առ 1-ն Յունիսի.

ա) Պարտաւորիչ մահճակալների թիւը . . 400
բ) Հիւանդներ առ 1-ն յունիսի 118
գ) Նոր մտած հիւանդներ 217
դ) » » » միւս հիւանդանոցներից 87
ե) Հիւանդանոցից առողջ ելածներ . . . 213
զ) Փոխադրած միւս հիւանդանոցները . . 1
է) Մահացութեան դէպքեր 6
ը) Մնացել են հիւանդ 202

* * *